



**Ընտրական իրավունքի
խնդիրներով
անվճար իրավաբանական օգնություն
կարող եք ստանալ**

080-080-804

**թեժ գծի անվճար
համարով,
հունվարի 15-ից մինչև մարտի 15-ը:**

Մարզերում նախաձեռնությանն աջակցում են՝
«Սյունիքի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն»
«Նոր Վայոց Ձոր»
«Նոր հայացք»
«Աջակից»
«Հենկ»
«Արմավիրի զարգացման կենտրոն»
«Միլենիում» կրթական հետազոտական ասոցիացիայի
Գեղարքունիքի մարզի մասնաճյուղ
«Համայնքի զարգացում»
«Արվյանի կանանց տարածաշրջանային ասոցիացիա»
«Երիտասարդություն հանուն ժողովրդավարության» կազմակերպությունները:

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2008 Թ.**

**ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ
ԴՐԱՆՑ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ**

Սույն տեղեկատվական թերթիկը տեղեկություններ է պարունակում ընտրողների ցուցակների կազման և վարման, հաշվառում չունեցող կամ այլ համայնքում հաշվառված անձանց ցուցակներում



Իրավաբանական բաժին

**Ծրագիրը ֆինասավորված է Նորվեգիայի թագավորության
դեսպանատան կողմից**

1. Ովքեր կարող են ընդգրկված լինել ընտրողների ցուցակում

Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակում ընդգրկվում են ՀՀ Ընտրական օրենսգրքի 2 հոդվածի համաձայն ընտրելու իրավունք ունեցող անձինք:

2. Ովքեր են այդ անձինք

Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք:

3. Ինչ հիմքերով են քաղաքացիները ընդգրկվում ընտրողների ցուցակներում

Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ:

Համայնքի ընտրողների ցուցակում ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք.

- ✓ այդ համայնքում բնակվող և որևէ համայնքում հաշվառում չունեցող քաղաքացիները:
- ✓ այլ համայնքում հաշվառված քաղաքացիները:

1

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

6

մասին դիմումների (*տես հավելված 2*) վերաբերյալ վճիռները կայացվում են այն ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը:

10. Կայացված վճիռների արդյունքը

Քվեարկությանը նախորդող հինգ օրվա ընթացքում և քվեարկության օրը ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին կայացված վճիռների հիման վրա ընտրողների ցուցակներում լրացումներ կատարում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկության օրը, ընտրական օրենսգրքի 14 հոդվածով սահմանված կարգով՝ լրացուցիչ ցուցակներ կազմելու միջոցով:

4. Հաշվառում չունեցող քաղաքացիները

Ընտրելու իրավունք ունեցող և հաշվառում չունեցող քաղաքացիները քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ իրենց համայնքի ղեկավարին, իսկ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 15 օր առաջ՝ նաև ՀՀ ոստիկանություն կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ներկայացնում են ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ հայտ (*տես հավելված 1*): Հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակում ընդգրկվում են բնակության վայրի մասին տեղեկանքի հիման վրա:

Հայտին կից ներկայացվում է տեղեկանք բնակության վայրի մասին: Բազմաբնակարան բնակելի շենքում բնակվելու դեպքում բնակության վայրի մասին տեղեկանքը տրվում է համատիրությունից կամ բնակչահագործման գրասենյակից, սեփականության իրավունքով անհատ քաղաքացիներին պատկանող սեփական տներում բնակվելու դեպքում՝ թաղային լիազորից, իսկ այլ դեպքերում՝ բնակության վայրի մասին տեղեկանք տալու լիազորություն ունեցող մարմնի կամ անձի կողմից:

5. Այլ համայնքում հաշվառված քաղաքացիները

Համապետական ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող քաղաքացիները քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ ՀՀ ոստիկանություն կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին

ներկայացնում են դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն:

6. Քաղաքացու դիմումի ճակատագիրը

ՀՀ ոստիկանության կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, քաղաքացուն տրամադրում է տեղեկանք՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից նրա տվյալները հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրոցների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

7. Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելը

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, իրեն՝ ընտրողների ցուցակում ընդգրկելու կամ ընտրողների ցուցակից հանելու մասին դիմում ներկայացնելու համայնքի ղեկավարին, իսկ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 5 օր առաջ՝ նաև ՀՀ ոստիկանություն կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

8. Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու քաղաքացու դիմումի ճակատագիրը

Համայնքի ղեկավարը դիմումը ստանալուց հետո՝ 2 օրվա ընթացքում, դիմումը և նրան կից՝ հարցի վերաբերյալ իր կարծիքը ներկայացնում է ստորաբաժանման ղեկավարին համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

ՀՀ ոստիկանությունը կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարը դիմումը ստանալուց հետո՝ մեկ օրվա ընթացքում, ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

9. Անճշտությունների վերաբերյալ վեճերի լուծման դատական ճանապարհը

Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ վեճերը կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններ ըստ պատասխանողի գտնվելու վայրի: Քվեարկությանը նախորդող հինգ օրվա ընթացքում և քվեարկության օրը ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, ցուցակներում ընդգրկվելու

_____ (նշվում է համայնքի կամ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման անվանումը)

**Հ Ա Յ Տ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ**

Ես՝

_____ (ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ)

Անձնագիր _____

(սերիա, համար, ում կողմից է տրված)

_____ թվականից առանց հաշվառման
բնակվում եմ

_____ (բնակության վայրի հասցեն)

Խնդրում եմ ինձ ընդգրկել _____

համայնքի ընտրողների ցուցակում:

Կից ներկայացվում է տեղեկանք բնակության վայրից:

ՀԱՅՏՍՏՈՒ _____

(ազգանուն)

_____ (ստորագրություն)

_____ 200 թվական

ՀՀ _____-ին

(նշել դատարանի անվանումը)

հայցվոր՝ _____

(անվանում / անուն, ազգանուն, հայրանուն)

հասցե՝ _____-ից

(նշել հասցեն)

(անձնագիր/տղիական քարտի համարը՝
արժեթղիության դեպքում)

(իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ,
պետ. Գրանցման համարը)

պատասխանող՝ _____

(անվանում / անուն, ազգանուն)

հասցե՝ _____

(նշել հասցեն)

ՀԱՅՑԱՂԻՄՈՒՄ

պահանջի մասին

(նշել հայցի համառոտ պահանջը)

(տալ վեճի համառոտ նկարագրությունը)

Գտնում եմ, որ

(նշել հայցվորի պահանջները հիմնավորող ապացույցները, հանգամանքները (գումարի թնագանձման
պահանջի դեպքում՝ թնագանձման ենթակա ընդհանուր գումարը և դրա հաշվարկը))

(նշել հայցապահանջը (ներք) հիմնավորող իրավական նորմը (ներք) և դրա (դրանց) համառոտ շարադրանքը)

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության
օրենսգրքի 2-րդ , 87-րդ և 88-րդ հոդվածները՝ դատարանից
Խնդրում եմ

(նշել պահանջը (ներք))

Կից ներկայացնում եմ՝

1. _____

2. _____

/.../

(նշել կցվող ապացույցները, որոնք հաստատում են հայցապահանջը)

Հայցվոր՝ _____

(ստորագրություն, (պաշտոնը) անուն, ազգանուն)

» « « _____ «200_թ.